ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Լոռի Բերդ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	**Միջոցառման անվանումը**	**Օրը**	**Ժամը**	**Անցկացման վայրը**
Լոռի Բերդ	Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025թ. վեցերորդ նստաշրջանի հերթական նիստ	09.06.2025թ.	12:00	**Լոռի Բերդ համայնքապետարան** (գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ փողոց, շենք 7)

ՆԱԽԱԳԻԾ 1

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով և 14-րդ հոդվածի 6-րդ կետով, 16-րդ հոդվածի 5-րդ մասով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025թ. վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ հունիսի 09-ի նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու
2025թ. հունիսի 09-ի № -Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ՝ ՀՈՒՆԻՍԻ 09-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025 թվականի վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ հունիսի 09-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գույքի ցանկում կատարել փոփոխություններ կատարելու մասին:

3) Ոստիկանության Լոռու մարզային վարչության Ստեփանավանի բաժնին գույք նվիրաբերելու մասին:

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2025 թվականի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին:

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԻ
ՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. *Մարգարիտա Հովսեփյան*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ և 42-րդ կետերով և 77-րդ հոդվածի 3-րդ կետով, 16-րդ հոդվածի 5-րդ մասով՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գույքի ցանկում կատարել փոփոխություններ համաձայն՝ հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ 3

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԲԱԺՆԻՆ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *Մարգարիտա Հովսեփյան*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հաշվի առնելով Ոստիկանության Լոռու մարզային վարչության Ստեփանավանի բաժնի պետի դիմումը, ինչպես նաև Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Ոստիկանության Լոռու մարզային վարչության Ստեփանավանի բաժնին նվիրաբերել յուրաքանչյուրը 50.000 (հիսուն հազար) դրամ արժողությամբ 10 (տաս) հատ ցանցային տեսախցիկ:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2025
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՈՒԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *Լևոն Մամաջանյան*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշման 9-րդ կետի պահանջները՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2025 թվականի հողային հաշվեկշիռը համաձայն՝ հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ 5

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ
ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

/Ձեկ. *Անի Մարտիրոսյան*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել՝ 2025 թվականի սեպտեմբերի 10-ը, ժամը՝ 12:00-ն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից: